

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ
ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Խորհրդային ժամանակաշրջանում ՀՀ բոլոր 48 քաղաքները և մոտ 250 գյուղերը միացած են եղել ջրահեռացման ցանցին, որը սպասարկել է քաղաքային բնակչության 60-80%-ին և գյուղական բնակչության 50%-ին: Երևանի բնակչության 97%-ը միացած է եղել կոյուղու ցանցին: Հանրապետությունում գործել են 20 կոյուղու մաքրման կայաններ, որոնք սպասարկել են միայն քաղաքներին և դրանց մոտակա գյուղերին: Մնացած բնակավայրերից հեռացվող կեղտաջրերն անմիջապես թափվել են մակերևութային ջրավազաններ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության համայնքների շատ փոքր մասն է ապահովված ջրահեռացման համակարգերով, ընդ որում դրանք կառուցվել են խորհրդային ժամանակաշրջանում, դրանց տեխնիկական վիճակը անմխիթար է և ոլորտում մեծածավալ ներդրումների իրականացումը դարձել է կենսական անհրաժեշտություն: Միաժամանակ, կեղտաջրերի մաքրման կայանները սակավաթիվ են (ընդամենը թվով 6), դրանք իրականացնում են միայն մեխանիկական մաքրում և չեն ապահովում հեռացվող կեղտաջրերի կենսաբանական մաքրում:

Զրահեռացման ոլորտում առկա են նաև մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես՝

ա. բնակավայրերի կեղտաջրերի հեռացման ցանցի խողովակաշարերի ապօրինի միացումները որպես անջատ համակարգ նախագծված և կառուցված հեղեղատար համակարգերին,

բ. կեղտաջրերի՝ համաշխարհային պրակտիկայում լայնորեն տարածված անհատական մաքրման տեղային սարքավորումների օգտագործման մշակույթի գրեթե իսպառ բացակայությունը,

գ. արտանետվող կեղտաջրերի աղտոտման ծավալների անբավարար բացահայտումը և վերահսկումը,

դ. ջրահեռացման համակարգ ունեցող բնակավայրերի համար ծառայությունների մասնագիտացված սպասարկում իրականացնող օպերատորների/կազմակերպությունների բացակայությունը,

ե. չմաքրված կեղտաջրերի ապօրինի օգտագործումը ոռոգման նպատակով,

զ. մաքրված կեղտաջրերի կրկնակի (երկորդային) նպատակային օգտագործման հնարավորությունների բացակայությունը,

է. ստորգետնյա ջրային ռեսուրսների սնման գոտում գտնվող համայնքներում ոչ բարվոք անհատական կեղտաջրերի հեռացման համակարգերի և զուգարանների առկայությունը և այլն:

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով՝

1. Չնայած անցած 25-30 տարիների ընթացքում ջրային ոլորտի լայնամասշտաբ ներդրումային ծրագրերի շրջանակում եղել են կոյուղու խողովակաշարերի վերականգնման առանձին աշխատանքներ, սակայն կոյուղագծերի վերականգնման համապարփակ ծրագիր չի եղել: Հանրապետության ջրային ոլորտում բարեփոխումները հիմնականում ուղղված են եղել մասնագիտացված ջրամատակարար ընկերությունների կողմից սպասարկվող տարածքների ջրամատակարարման ծառայությունների բարելավմանը: Բարեփոխումների ներկա փուլը (2-րդ սերնդի բարեփոխումներ) պետք է ավելի շատ կենտրոնացած լինի ջրահեռացման ոլորտի վրա, ինչպես նաև սպասարկման տարածքից դուրս գտնվող բնակավայրերի բարելավումների վրա, ինչն, ըստ էության, ավելի բարդ է:

2. Կոյուղու համակարգերի սպասարկման տարածքը սահմանափակ է՝ ընդհանուր առմամբ ներառելով բնակչության միայն 70%-ը, որից քաղաքային բնակչության համար հասանելիությունը 96.4% է, մինչդեռ

գյուղական բնակչության համար հասանելիությունը ընդամենը 17% է (Հայաստանում կեղտաջրերի կայուն հավաքման և մաքրման ազգային ռազմավարության մշակում. առաջին փուլի զեկույց, OECD, 2014թ.): Անհրաժեշտություն է առաջացել ջրահեռացման ոլորտում, և հատկապես կեղտաջրերի մաքրման բնագավառում մեծածավալ ներդրումներ իրականացնել: Ընդ որում հարկ է նշել, որ համաձայն Համաշխարհային Բանկի ուսումնասիրությունների¹ Կովկասի և Միջին Ասիայի երկրների ջրահեռացման հիմնական ենթակառուցվածքներում ներդրումները ունեն մեծ արդյունավետություն, մասնավորապես ըստ տնային տնտեսությունների եկամտային խմբերի քաղաքային բնակավայրերում ունեն ընդհանուր 3,3 Օգուտներ-Ծախսեր հարաբերակցություն, իսկ նույնը գյուղական բնակավայրերում՝ ընդհանուր 19,9 Օգուտներ-Ծախսեր հարաբերակցություն:

3. Թեև Հայաստանն առաջադիմել է գետավազանային կառավարման պլանների մշակման գործում, այնուամենայնիվ դեռևս մեծ անելիք ունի ԵՄ ԶՇԴ-ի պահանջների կատարման առումով: Գետավազանային կառավարման պլանների մշակման միջոցով հիմնական քայլեր պետք է ձեռնարկվեն սկզբնական աղբյուրում աղտոտման վերահսկման համար, ինչպես նաև հնարավորության դեպքում ընդունվեն և/կամ մշակվեն արտանետումների թույլատրելի սահմանաչափերի մասին իրավական ակտեր, ինչպես նաև շրջակա միջավայրի որակի ստանդարտներ (Հայաստանում կեղտաջրերի կայուն հավաքման և մաքրման ազգային ռազմավարության մշակում. առաջին փուլի զեկույց, OECD, 2014թ.):

4. Զրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող օպերատորների հետ կնքած պայմանագրերում կեղտաջրերի մաքրման պահանջները շատ մեղմ են (Հայաստանում կեղտաջրերի կայուն հավաքման և մաքրման ազգային ռազմավարության մշակում. առաջին փուլի զեկույց, OECD, 2014թ.),

5. Ներդնել ջրահեռացման ծառայությունների հետ կապված արդյունավետության ցուցանիշներ, ներառյալ կոյուղու ցանցի կառավարումը, կեղտաջրերի մաքրումը կամ, հնարավորության դեպքում, տնային տնտեսություններին ֆեկալ տիղմի կառավարման

¹ http://www.copenhagenconsensus.com/sites/default/files/water_sanitation_assessment_-_hutton.pdf

ծառայությունների մատուցումը (Հայաստանում կեղտաջրերի կայուն հավաքման և մաքրման ազգային ռազմավարության մշակում. առաջին փուլի զեկույց, OECD, 2014թ.),

6. նախորդ 10-15 տարիների ընթացքում համաշխարհային պրակտիկայում արմատական կերպով փոխվել են կեղտաջրերի կառավարման մոտեցումները: Եթե նախկինում այն ընդունվում էր սուկ որպես կենսագործունեության արդյունք կամ աղտոտված ջուր, ապա այժմ այն դիտարկվում է որպես ռեսուրս (և ոչ միայն ջրային), որը ենթակա է օգտահանման և դրանում պարունակվող օգտակար հատկությունների կորզման ու տարբեր բնագավառներում օգտագործման առումով,

7. անհրաժեշտ է սահմանել արտադրական կեղտաջրերի մոնիտորինգի հատուկ կանոնակարգ՝ արտացոլելով հնարավոր վտանգները: Կանոնակարգում պետք է ամրագրվի ոչ միայն դեպի շրջակա միջավայր (այդ թվում ջրային ավազան), այլ նաև ջրահեռացման ցանց արտանետվող արտադրական կեղտաջրերին ներկայացվող պահանջները: Վերջիններս, ի տարբերություն գործող օրենսդրության, պետք է ուղղված լինեն ոչ միայն ջրային ավազանների անվտանգության ապահովմանը, այլ նաև ջրահեռացման համակարգերի արդյունավետ ու անվտանգ շահագործման ապահովմանը:

Նախագծի 2-րդ հոդվածը մշակվել է ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում փոփոխություններ կատարելու արդյունքում ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 359 որոշման հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ ջրային օրենսգիրքը 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ համապարփակ կերպով կկարգավորվեն ջրահեռացման

իրավահարաբերությունները, ինչպես նաև կսահմանվեն կեղտաջրերի և ջրահեռացման համակարգերի տեսակները և ըստ տեսակների՝ կեղտաջրերի հեռացմանը, մաքրմանը և մոնիտորինգին ներկայացվող պահանջները:

Սույն նախագծով, որոշակի պայմանների առկայության դեպքում, արտադրական կեղտաջուր արտանետողների նկատմամբ սահմանվել է կեղտաջրերի նախնական մաքրման պահանջ: Այդ գործընթացների նկատմամբ վերահսկողությունը իրականացնելու համար սահմանվել է արտադրական կեղտաջրերի մոնիտորինգի գործառույթ, որը կարող է վերապահվել է միասնական օպերատորի սպասարկման տարածքներում՝ միասնական օպերատորին կամ մասնագիտացված կազմակերպություններին իրականացնելու համար:

Ներկայացվող նախագծով իրավական հենք կստեղծվի Հայաստանի Հանրապետության տարածքում բոլոր արտադրական կեղտաջուր արտանետողների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն հավաքագրելու և պետական ջրային կադաստրում ներառելու համար, մասնավորապես կազմակերպության գործունեության տեսակը, թույլատրված արտահոսքի ծավալները, տվյալ արտադրական գործունեությանը բնորոշ կեղտաջրերի բաղադրությունը և այլ տեղեկատվություն, որը դյուրին կդարձնի ջրահեռացման ոլորտի արդյունավետ բնապահպանական վերահսկողության իրականացման համար: Տարբեր արտադրության ճյուղերի կեղտաջրերի վերաբերյալ տվյալների բազան զգալիորեն կդյուրինացնի մոնիտորինգի իրականացման գործընթացը, քանի որ հստակ կսահմանվեն այն «վտանգավոր» աղտոտիչների ցանկը, որոնց նախնական մաքրման համար պարտադիր պահանջ պետք է ներկայացվի, ինչպես նաև դրանց քանակական սահմանաչափերը կվերահսկվեն դեպի ցանց կամ շրջակա միջավայր արտահոսքի դեպքում:

Ջրահեռացման ոլորտում ներդրումների խթանման նպատակով, հատկապես միասնական օպերատորի սպասարկման տարածքում և չընդգրկված համայնքների ջրահեռացումը բարելավելու տեսանկյունից նախատեսվում է տարանջատել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները, որպես առանձին ծառայությունների տեսակներ՝ Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի իրավասությունների, այդ թվում նրա կողմից լիցենզիայի տրամադրման ոլորտում, քանի որ այդ ծառայությունները կարող են իրականացնել տարբեր սուբյեկտներ: Նպաստավոր նախադրյալներ կստեղծվեն պետություն-մասնավոր հատված գործընկերության (ՊՄԳ) շրջանակներում մասնավոր ներդրողների, ինչպես նաև միջազգային ֆինանսական

կազմակերպությունների և դոնորների կողմից ոլորտում ներդրումներ կատարելու ուղղությամբ:

Սույն նախագծով խրախուսվում է կեղտաջրերի կրկնակի (երկրորդային) օգտագործումը օրենսդրությամբ թույլատրելի բոլոր նպատակներով, եթե դրանք կհամապատասխանեն նպատակային ջրօգտագործման որակական պահանջներին: Բացի այդ բնապահպանական հարկը խթանող նորմերը ընդգրկում են տնտեսական գործունեության բոլոր ոլորտները, ի տարբերություն ներկայումս գործող միայն ձկնաբուծության և խեցգետնաբուծության ոլորտի:

Միևնույն ժամանակ սահմանվում է ոռոգման ջրի որակի ստանդարտները հաստատելու անհրաժեշտությունը՝ կեղտաջրերի օգտագործումը ոռոգման նպատակով կանոնակարգելու համար: Դրանով մաքրված կեղտաջուրը դիտարկվում է որպես ջրային ռեսուրս:

Նախագծով նորմեր են նախատեսված նաև համայնքների համար՝ տեղական ենթակառուցվածքներ ստեղծելու պարտականության ուղղությամբ, մասնավորապես համայնքները պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման պահանջներին համապատասխանող բնակավայրերի կեղտաջրերի հեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերով: Այս իրավական նորմի նպատակը ենթակառուցվածքների հետագա զարգացման ուղղության մշակումն է և դրա իրականացման տեսլականը և կանոնակարգումը, որից հետո հստակ կարող է սահմանվել համայնքների նկատմամբ պարտականության սահմանման ժամանակացույցը:

Նախագծի 2-րդ հոդվածի ընդունմամբ ապահովվում է ՀՀ ջրային օրենսգրքի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության փոփոխություններին՝ ելնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 209-րդ, 210-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի ՆՀ-170-Ա հրամանագրի 5-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներից:

3.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն

կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը մշակվել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատանքային խմբի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

1. Հայաստանի Հանրապետությունում ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը ուղղված իրավակարգավորման հստակեցում, շրջակա միջավայր արտանետվող կեղտաջրերի աղտոտման ծավալների նվազեցում:
2. Շրջակա միջավայրի պաշտպանության և ԵՄ դիրեկտիվների հետ ներդաշնակեցման նպատակով, շեշտակիորեն կբարձրացվի կեղտաջրերի մաքրման մակարդակը, որով հնարավորություն կստեղծվի Հայաստանում ջրային ոլորտի կառուցվածքային բարեփոխումներ իրականացնել:
3. Կստեղծվի համապարփակ իրավական ակտ, որն ընդգրկում է կեղտաջրերի հեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների հետ կապված հիմնական պահանջները:
4. Նախագծի 2-րդ հոդվածի ընդունումը կապահովի ՀՀ ջրային օրենսգրքի համապատասխանությունը 2015 թվականի դեկտոմբերի 6-ին ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 10-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի՝ ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:

«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն կառաջանա փոփոխություններ և լրացումներ կատարելու ենթաօրենսդրական հետևյալ ակտերում՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 22-ի ՀՀ Ջրային ռեսուրսների մոնիտորինգի իրականացման և

հաշվետվությունների գրանցման կարգը հաստատելու մասին» N 639-Ն որոշման մեջ,

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի «Ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 1060-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 68-Ն որոշման մեջ,
3. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սահմանած իրավական ակտերում,
4. ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 28-ի «Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին» N-1228- Ն որոշման մեջ,
5. ՀՀ բնապահպանության նախարարի 2003թ. դեկտեմբերի 10-ի «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան հաստատելու մասին» N 464-Ն հրամանում:

Անհրաժեշտ կլինի հետևյալ իրավական ակտերի ընդունումը՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, որով կսահմանվեն համայնքների բնակավայրերի կեղտաջրերի հեռացմանը և կեղտաջրերի մաքրմանը ներկայացվող պահանջները:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, որով կսահմանվեն նախնական մաքրմանը ներկայացվող պահանջները:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի կողմից Ոռոգման ջրի որակի ստանդարտների հաստատում:
4. Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի որոշում՝ արտադրական կեղտաջուր արտանետողների կողմից կեղտաջրերի՝ ջրային ռեսուրս թույլատրելի սահմանային արտահոսքի մասին:
5. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում՝ արտադրական կեղտաջուր արտանետողների կողմից արտադրական կեղտաջրերի՝ կենտրոնացված ջրահեռացման համակարգ արտանետման դեպքում թույլատրելի սահմանային արտահոսքի և այլ լրացուցիչ պահանջները: